

ՆՇԱՆ ՇԱՀԷՆ



ԴԷՊԻ ԳԱՐԻԻՆ



1948

Վ Ր Ի Պ Ա Կ

Էջ 7 վարէն Յրդ տող «խոստումներուն»ը կարդալ «խոստումներուն» ,
 էջ 46 վերէն Յրդ տող «երբ կրնաս ալ երազիդ»ը
 կարդալ «երբոր կրնաս ալ երազիդ» :

891.99

19332

6-17

Յանքեր, Նպաստ

Դիմի գրութիւն

5 յետ

891.99

Ե-17

ՆՇԱՆ ՇԱՀԷՆ

ՄԱՐԿԱՆԵ Է 1981 թ.

ԴԵՊԻ ԳԱՐՈՒՆ



ՀԱՆԷՊ

1948



ՏՊԱՐԱՆ ԱՆԻ, Ա. ԷՔՍԷՔՃԵԱՆ, ՍԱԼԻՊԷ - ՀԱԼԷՊ

19.332
128934

ԴԷՊԻ ԳԱՐՈՒՆ

Անցած ճամբէն արիւնի՝ տառապահար ո՛վ ազգ իմ,
Ես՝ ակունքին քու սիրոյ անդաւաճան որպէս քուխ,
Երանութեամբ մը տրտում այսօր նորէն կը նայիմ
Մերթ երէկին անժըպիտ, ապագային փոխն ի փոխ:

Երէկն անցա՛ւ... քայց ափսո՛ս, մոխիրներո՛ւ ուղիով.
— Անշուշտ կրնար ան ըլլալ արեւին չափ անսահման —
Չըծաղկեցաւ երագի ո՛չ մէկ ծաղիկ անխռով,
Կեանքը եղաւ մեզ այրող անապատի մը նըման:

Սակայն ինչո՛ւ քրքրեւ անցեալ մոխիրը հիմա.
Ինչո՛ւ հպարտ չկանգնիլ արեւին դէմ ապագայ
Որ անխաւար շողերն իր ահա արդէն կը քանայ:

Այսօր խրոխտ դէպի կեանք, դէպի գարո՛ն կը թեւենք
Կը շողշողայ ապագան արեւաքորը ու աննենգ
Որու շունչով հեւացող այս խելայեղ մեր երթին

Փառքն ու պարծանքն այսօրուան պիտի խինդով կոթողենք:

Ս Է Ր

ՎԱՂԱՄԵՌ ԵՒ ԱՆՄՈՒՐԱԶ ԸՆԿԵՐՈՋՍ՝
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԲԵՕՇԿԵՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Զով իրիկուն մ'աշունի
Բաց են փեղկերը մութին՝ ու լուսինին դեմ՝ լացող.
Աստղ մը այնտեղ կը տժգունի.
Հովը դանդա՛ղ ու խռով
Սա մայթերէն կը քալէ
Դառն մահերգ մը հծծելով.
Վիշտն իր աչքին լոյսն է առեր ու ան հիմա չի՛ տեսներ.
Մերթ տուներու կատարներուն կը զարնուի խօլական,
Մերթ ալ կ'իյնայ թաւալզլոր ոտքերուն տակ ծառերուն:

Հիւա՛նդ տղայ...
Ինքն իր վրայ
Կը թաւալի շարունակ.
Մերթ ան կ'ըլլայ որոնում,
Մերթ ալ ամբո՛ղջ աղաղակ:
Մարմինն անոր՝
Գեհններու քոցին մէջ,
Լուռ կ'արտասուէ փառքին համար անցեալի:

Մահն յաղթական
Երակներուն եւ արեան
Եւ մարմինին մէջ տղուն,
Ինչ հրճուանքով կը պարէ
Դարձած սարսուռ ու պրկում:

Հիւանդ տղայ...
Ինքն իր վրայ
Կը թաւալի շարունակ:

Լուռ է սենեակը հիմա.
Սնարին մօտ
Նստած են մայրն ու դեռատի քոյրը որը:

Մինչդեռ հայեացքը անոր
Կէտի մը հետ եթերի,
Կ'ըլլայ կամուրջ մը անգոր
Որ անդադար կը շարժի:
Այլ քիչ յետոյ
Նայուածքն աղօտ, մահամերձ,
Երազներու ծիին վրայ բոցաթեւ
Կը բարձրանայ անարգել:
Կ'անցնի դաշտն՝ ու լեռներ,
Հորիզոնէ հորիզոն,
Մինչեւ լուսին ու արեւ

Մինչեւ աստղեր ու աստղեր:

Բայց ալ յոգնած ի վերջոյ
Կամա՛ց, կամաց կ'իջնէ ցած:

Հեռուններէ՛ն
Տարտամօրէն կը բացուի
Աշխարհ մը նոր՝
Տարբեր քոլո՛ր աշխարհներէն գիտցուած:
Ու ապշահա՛ր կը նայի
Ժաղիկ ժպիտն այտերուն,
Հեռուններո՛ւն,
Երանութեամբ մը անհուն....:

Արարատն է ահա կեցած անվերեր.
Ու դաշտերն ալ երկարած՝
Իր ասպետին սպասող
Գեղահրաշ կոյսին պէս....:
Եւ Արագածն է ահա,
Լոյս Սեւանը, Հրազդանը ու Երեւանն է հիմա....:
Եւ ան կ'անցնի...
Հպարտանքով կը նայի՝
Երեւանի փողոցներէն երբ կ'անցնի,
Բոլո՛ր, քոլո՛ր մարդերուն
Եւ աշխարհին գիտցուած....:

Բայց ան հիմա
Կը զարմանայ
Թէ ի՞նչպէս օ՛, ի՞նչպէս կրցաւ
Մոռնալ ամէն վիշտ ու ցաւ...
... Մոռցաւ հիանդ էր յայնժամ
Մոռցաւ ամէ՛ն, ամէ՛ն քան...:

Ամէն գիշե՛ր
Ծերմակ շիրմի մը վրայ
Նիհար աղջիկ մը կու լայ:
Բայց ոչ որի՛ն քանայ պիտի հոգոյն ծաղիկը թաքուն,
Գիշերային միայնութեան մաշող խորհուրդը խորին.
Ու ոչ որի՛ն ըսէ ան
Ի՞նչ խոստումներ կը փշրէ
Վրան սիրոյ շիրիմին...:

Պիտի անոնց՝
Խոստումներուն,
Ձեւ ու գոյն տայ,
Հայրենիքի հողին վրայ:

ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆՆ ԱՅՍ ԳԻՃԵՐ

Երջանկութիւնն այս գիշեր կը քախէ դուռնս նորէն...
Ու կ'ուզէ որ իրեն հետ ըլլամ դարձեալ առանձին.
Հոգւոյս ծալքերը քանամ ու սրտէս ալ տամ իրեն
Նիստ մը փափուկ, պոկնքնող, ինչպէս տուի փողոցին:

Բայց քեզ ինչպէ՞ս ընդունիմ, երջանկութիւն սգաւոր...
Եւ մեկուսի քեզի հետ ըլլամ հեռու ամբոխէն.
Դուրսը արին կայ ու լաց, դուրսը՝ պայքար ահաւոր,
Դեռ չսկսուած կռիւ կայ հոգիներո՛ւ մէջ ամէն...:

Դեռ քալուածքներ կան տարտամ ու դեռ քուններ՝ ալիկոծ.
Դեռ արցունքնե՛ր ողբագին, այնքան սիրեղ ու անմեղ,
Այտերէն վար կը հոսին պարմաններու սիրաբոց:

Երջանկութի՛ն վերաւոր, ես քեզ ի՞նչպէս ընդունիմ.
Գնա՛, գնա՛ ու անոնց հոգիներու ծալքերուն
Արձակէ՛ շողը քարի գգուանքներով մտերիմ,

Զանգի անոնց մէ՛ջ միայն քեզ ունենալ ես կ'ուզեմ:

ԱՆԲԱԽՑ ՔՐՈՋ ՄԸ ՀԱՄԱՐ

Ժաղիկի պէս ծլեցար հողմավար ու անգարուն...:
Չունեցա՛ր իսկ անթախիժ քիչ մը ժպիտ արեւէն.
Քիչ մը ժպի՛տ որուն դուն անշուշտ յոյսով մը անհուն
Պիտի ամբողջ տայիր սէրդ ու ընէիր ապաւէն:

Խուսափեցար մարդերէն — կեանքը տաժանք դարձնող —
Առանձնութեան հովանին նախընտրեցիր անարցունք:
Ո՛չ մէկ նայուածք աչքերէդ՝ որ ունենար քիչ մը դող
Երանութեան յորդ ցունցէն, ինկաւ վաղիդ վրայ մոլթ:

Կեանքը ա՛յս է, սիրելիս, լաւագոյնիդ քայքայում՝
Այնքան ատեն որ կ'ըլլայ մարդը՝ մարդուն պատուհաս.
Պիտի անվերջ տառապիս — տառապանքովդ յար ժպտուն —,
Այլ փոթորիկը ներքին պիտի երբե՛ք ցոյց չտաս:

Պիտի անխոնջ պայքարիս քարի օրուայ մը համար,
Քանգի պայքարն է մ'իայն իսկութեանսդ երաշխիք.
Պիտի քալես պայքարով ճամբաներէն ցրտահար
Մինչեւ հասնիս դուն Սեւան ուր կեանքն է նոր ու քարիք...:

Հողիդ յոյզովն հարազատ կ'ըլլաս այնքա՛ն երջանիկ...:

ԿԱՂԱՆԴ-ԳԻՃԵՐ

Կաղանդ-գիշեր է հիմա. ու փողոցները նախկին
Կարծես հագած ըլլային պատմութեաններ լուսազարդ.
Խնդրութիւն կայ ամէն կողմ, երգ ու պարեր ջերմագին
Ու երազներ կը գրկեն կեանքի իրանը հալարտ:

Բայց տրտմահեծ ո՞ր հովէն՝ ձեզ յիշեցի ես դարձեալ,
Դուք՝ վշտահար, հալածուած, ո՛վ անտունների աշխարհի.
Գիտեմ — ձեր դէմայս պահուն տառապանքները անցեալ
Յանկարծօրէն կը ցցուին՝ հասակներով սարսուղի:

Այստեղ մանուկը կու լայ, Կաղանդ-Պապուկը չի՛ գար...
Մարդը՝ մարդուն տիրակալ, ոխերով լի, է՛յ աշխարհ,
Երազներու այցն անգամ ինչո՞ւ անոնց զլացար:

... Ձեզի համար, ո՛վ որքեր, այս գիշեր հա՛ց ըլլայի
Ու լիառատ փռուէի սեղաններուն վրայ լուռ,
Կամ ըլլայի յոյսը ձեր զգուող երա՛գ ու համբոյր:

Ձեր ձեռքերուն, ո՛վ որքեր, պայքարի թո՛ւր ըլլայի...:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հանդիպեցար ինձ այսօր Ճամբու վրայ պտոյտի
Ճամբուն վրայ ուր երէկ երազներու ետեւէն
Եւ արքեցած իրարմով կը քալէինք թեւ թեւի:

Միրտըս յանկարծ կախուեցաւ քայլերուդ հին նուագէն.
— Ի՞նչ ողբագին՝ ունկնդրումս աչքերուդ երզը տարտամ—
Ես քայլերուս զգացի կ'թոսումը սարսուռէն:

Բայց դուն անցա՛ր անխոռովորալէս զեփիւն իրիկուան...:
Ու դեռ կեցած կը նայիմ, կը հետեւիմ քայլերուդ
Որոնք երբեմն ի՛մն էին ինչպէս սարսուռն այսօրուան:

Կը հետեւիմ դեռ քեզի ու կը խորհիմ թէ ի՞նչ շուտ
Անձամօթ մը դարձայ ես աչքերուդ սեւ լճակին
Որուն նաւորդն երբեմնի՝ մ'իսկ աչքերըս էին:

Բայց դուն անցա՛ր իբրեւ թէ երբեք ճանչցա՛ծ ըլլայիր:

Տ Ա Ր Ե Լ Ի Ց Ը

Այս գիշերն ալ անցընել յիշատակի մը սիրոյն.
Յիշատակ մը որ երէկ ձեռքերուս մէջ ունէի,
Որ ցնդեցաւ վաղաժամ, ո՛հ, երազի մը հանգոյն
Որուն վրայ իմ ամբողջ հերքըս կ'ըլլար հովանի:

Հոկ հովին հետ թեւ թեւի... ո՛հ, կը խորհիմ թէ ի՞նչ շուտ
Մոռցաւ ինքզինք... այն ճամբան ուր քալեցիք միասին.
Խանդաղատանք մ'աչքերուն երբ ան ըսաւ բառ մը նուրբ
Ա'յնքան տարբեր միաներէն որ կը հնչէ տակաւին:

Ու դեռ լսել կը կարծեմ աղուոր աղջիկն այդ ազտիկ
Որու հոգին յատակ էր բիրենդի պէս՝ այդ գիշեր
Երբ գեփիւն իր մեղեդին մեր ճակտին դէմ կը փշրէր:

Տարբեր երազ մ'աչքերուն՝ վերջին անգամ երբ տեսայ
Մոռցած էր ան ամէն բան... ի՞նչ փութութիւն դառնաղէտ,
Երբ ըսաւ թէ անցեալի ազտիկ աղջիկն ինքը չէր...:

Տարեւոյցի մը սիրոյն անքուն մնալ այս գիշեր...:

Վ Ե Ր Յ Ի Շ Ո Ւ Մ

Կը յիշե՞ս իրիկունն...
Շունչին տակ ծառերուն
Հրդեհում ու գրկում...:

Կը յիշե՞ս իրիկունն...
Սուգին տակ ծառերուն
Սիրոյ ինչ դա՛ռն քայքայում...:

Օ՛, գիշե՛ր տրամազին...
Երբ տերեւ մը արցունք
Հացաւ այն ծառը հին...:

ԵՐԱԶ-ԳԻՇԵՐ

Կ'իջնէ գիշերն ամպերէն
Զերդ երագի փաթիլներ.
Գիշերն ալիքն է արդէն
Նդանակի մը անտէր:

Գիշերն անձրեւ մ'է թեթեւ
Ածունեքուն հոգիիս.
Գիշերն երագ-կոյսի թեւ,
Կը պարուրէ գութով զիս:

Գիշերն կոյսի մ'է նըման
Որուն կ'երթամ գլխահակ
Դընել զըլուխս անվարան
Զով ու հեքոտ կուրծքին տակ:

Պ Ե Ղ ՈՒ Մ Ն Ե Ր

Հողը կրկին կը պեղեմ՝ յիշատակի իմ տունիս.
Աշխատանքն այս տքնաջան՝ չեմ գիտեր ես թէ ինչո՞ւ.
Կ'ըլլայ նայուածքըս քրիչ օրերուն դեմ անցեալիս
Ու կը զարնեմ անով ես թաղուած զանձեր գտնելու:

Հողը այնքան է փխրուն որ կը բացուի ինքնիրեն.
Եւ ալ ահա մի առ մի յիշատակներըս բոլոր
Իրենց հմայքը աննիւթ ի լոյս աշխարհ կը քերեն,
Մին՝ մխացող ու այրող, մին ալ այնպէ՛ս լուսաւոր:

Սակայն ի՞նչպէս մնացին այսքան անեղծ ու մաքուր
Հողերուն տակ տիղմախառն, փոթորիկին մէջ կեանքի
Ուր ամէն ինչ վատնումով կ'ըլլայ մոխիր ցաւալոռ
Զոր սեւ քամին վայրկեանին կ'առնէ անխօս կը տանի

... Զայն կը պեղեմ տակաւին հիացումով ու լալով.
Նոր նոր յուշեր անթեղուած յանկարծօրէն կը յարնեն.
Ահա՛, ահա՛ քնացող երկու դիակ քովէ՛ քով
Որոնք սառած յոյսերով տակաւին սէ՛ր կը բուրեն...:

Անցեալս եղաւ անարին երազներու ցուրտ շիրիմ...:

Կ Ե Ա Ն Ք Ի Ն

Դեռ տառնեինն տարեկան... քայց կարծես շա՛տ ապրած եմ.
Խմաստութիւնը կեանքին ալ կը բուրէ իմ ճակտէն.
Խորհրդաւոր վեհութեամբ կը մծտենամ իրերուն.
— Կեանքն իր դրոշմը որքան վաղ դրաւ ճակտիս դողդոջուն —:

Կը մտածեմ սարսափով — դուն գիտի՞նչպէս ատեցիր
Ջրապրկումս տեսնելով քարծուքներու ի խնդիր.
Ի՞նչ պալատներ հոգիիս երազներուն անքասիր
Հարուածներովդ անխընայ՝ չոր-անապատ դարձուցիր:

Քայց ալ հերի՛ք զարնես, կեա՛նք, որքան դաժան եղար դուն.
Չունեցայ դեռ ասի մը հող խրախճանքի պարտէզէդ
Մինչ ուրիշներ կը լողան մէջը խինդի ծովերուն:

Ի՞նչ մտաց, կեա՛նք, որ ըլլար անթախիծ կամ՝ քիչ մը մեղմ,
Քիչ մը ուրախ եւ քիչ մ'ալ այսպէս թեթեւ ու խոհուն.
Մօր մը գրկին ջերմութեան, ո՛հ, կարօտի խենդ ծով եմ...:

ԱՆԾԱՆՕԹԻՆ ԿԱՐՕՏՈՎ

Ես կը շրջիմ այս գիշեր անձանօթին կարօտով.
Կ'անցնիմ քուրը մայթերէն քայց ան չկա՛յ ու չկայ:
Սպասումն այս սրտիս մէջ կ'ըլլայ յորդող արեան ծով,
Բայց ան չի՛ գար ու չկա՛յ ան որ պիտի իմն ըլլայ....

Շարունակեմ դեռ ճամբաս, գուցէ, գուցէ՛ հանդիպիմ.
Զեկիւնն ահա կը փչէ սիրոյ ծարաւ հուրքիս դէմ.
Զեկիւնն՝ անշուշտ, սիրազեղ լուռ հառաչանքն իր ցաւին...:
Լայն կը քանամ սիրտս անոր ու անձկագին կը սպասեմ...:

... Բիշ մ'ալ աչտեղ համբերեմ, անշուշտ հիմա կը հոգնի.
Ալ կը լսեմ հեռուն ձայներ ոտքի ու շունչի.
Ու խաւարն այս նահանջող կ'ըլլայ կամուրջ անուրջի:

Ձայներն տակաւ կը դադրին, քայց ան չկ'այ ու չկայ.
Լուսինն մտաւ տունէն ներս՝ լեռներուն մէջ հեռակայ.
Աստղերն՝ լոյսով հալածող այգաբացն է որ կու գայ

Բայց ան չի՛ գար ու չկա՛յ ան որ ամբողջ կեանքս ըլլայ....



ՊԶՏԻԿ ԱՂԶԻԿ ԴՈՒՆ ԳԻՏԵՄ

Աղջիկ մը պարզ ու պզտիկ.
Երգենոնի մը դիմաց,
Հոյս մատներով գեղեցիկ
Կը նուագէ երկիւղած:

Պարը գինով մատներուն՝
Գինիին պէս զգըլխիչ,
Կ'ըլլայ ժպիտ մը թաքուն
Ստեղներուն լուսաջինջ:

* * *

Պզտի՛կ աղջիկ, բայց գիտե՞ս
Թէ սիրոս ալ է երգենոն...
Նուագողին՝ սիրակէզ,
Լուռ կը սպասէ դեռ գալուն...:

Պզտի՛կ աղջիկ, այս գիտե՞ս...:



Անցնող կոյսերը բոլոր՝
Որպէս մ'եղու ժրաջան,
Նայուածքներով խորախոր
Մեղրահիւթէս կը զողնան:

Բայց կը սպասեմ ես Անոր...
Պիտի արդեօք գտնուի՞
Որ սիրոյ քոյնն իր անդորր
Հիսէ որպէս թագունի:

ՍԻՐՈՅ ՀՐԴԵՅ ԿԱՐՕՏՈՎ

Այսօր հիանդ եմ նորէն սիրոյ հրդեհ կարօտով:
Ի՞նչ կ'ըլլար, ա՛խ, սիրելի՛ս, գուշակելով զայն այսպէս
Գայիր լեցնել զիս ամբողջ քու քարութեամբ սիրակէզ,
Տայիր սէրէդ քիչ մը շուք, անըջական շունչ մը զով:

Թափառէինք միատեղ արտերուն մէջ ամռայի
Ու իրարմով ըլլայինք երգ ու ծիծաղ ներդաշնակ:
Սիրտըս՝ զինով մը արդէն աչքերուդ լուռ երգին տակ,
Բացուէր ազատ, տարօրէն զերդ բոցավառ հայելի:

Բոցը երբե՛ք քեզ չազդեր. դուն դիտէիր քե՛զ միայն.
Գիտէիր լա՛ւ, հմայուած գեղեցկութիւնդ անրիժ,
Սէրդ՝ աստղալոյս, որ կեանքիս եղաւ շքեղ ուղեգիծ:

Յետոյ համբոյր մ'անծրեւէր նոր խինդ ու սէր մեր սիրտին
Ու փոքրանալն զգայինք այս ահաւոր անհունին,
Արեւի՛ն ալ մենք տայինք մեր սէրէն հուրք քարութեան...

Սիրոյ հրդեհ կարօտով կը վառնուիմ մինչ ունայն...:

Ա Շ Ո Ւ Ղ Ա Կ Ա Ն

Որքան էլ խոր նետըդ խոցէ՝ սիրոյ խօսքին քսուն եմ էլի.
Գովքիդ համար գարնանաշունչ, հազարամեայ թաուն եմ էլի:
Որքան էլ լուռ, լինես հեռու, հորիզոններ չեմ ծանաշում:
Տեսքիդ համար՝ քարծուներն թափառաշուղ եարն եմ էլի:

Օտար վայրում, հեռուներում, պարտեզներում ուրիշների
Թէ ծառ լինես կանաչափայլ՝ սալուի-չինար թէ նշննի,
Իսկ թէ յանկարծ մոռացումի շունչը զգաս ճակատիդ փշրող,
Դարծի՛ր, դարծի՛ր, դարծիդ համար սիրոյ ծաղաւ պարն եմ էլի:

Արշալոյսին արեւու հետ, արեւու պէս կը տեղաւ՛ ես.
Շողերի հետ որպէս մի շող քո ճակատում կը շողամ ես.
Շունչ ու աւին ատենքերիդ՝ երգ ու ծիծաղ կը տամ դէմիդ,
Սիրոյդ համար թըրթըռացող, քաղցրահնչին լա՛րն եմ էլի:

Անճառ վերքի դեղ ու դարման, դու յաւերժո՛ղ իմ անուշ սէր,
Դու սրտէ-սիրտ ու աչքէ-աչք կամրջուո՛ղ իմ անուշ սէր.
Եղել եմ ես մի հուր աշուղ որ ամէն տեղ գովքըդ անեմ,
Արեւների քոյրը խնկած՝ կրծքիդ յարմար վարդն եմ էլի:

ԵՐԿՈՒ ՈՐԲԵՐ ՁԵՌՔ ՁԵՌՔԻ

ԳԻՇԵՐՈՒԱՅ ՄԸ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Երկու որբեր ծեռք ծեռքի կը քալեն լուռ մայթերէն,
Կ'անցնին թեթեւ, հեզասահ, որպէս զեփիւռ գիշերուան.
Գուրգուրանքով մը արծակ զիրար այնպէ՛ս կը սիրեն...
— Է՛հ, տառապեալ հոգիներ մ'իթէ արգելք կը ճանչնա՞ն...:

Վայրկեան մ'առաջ օտարներ էին անոնք տակաւին.
Իրար հոգին արդեօք ն՞րբ քրքրեցին այդքան խոր,
Ն՞րբ քոց աչքերը տեսան, զիրար այդքա՛ն սիրեցին...
— Տառապեալներ իրարու քաց զիրքեր են վիրաւոր—:

Կեանքը երբեք չե՛ն ատեր — թէեւ՝ ծեծուած ալ անկէ,
Ողբերգութիւն մը ունին որպէս ժպիտ դէմքերուն,
Երգ ու ծիծաղ՝ անարեւ, տառապանքներ՝ անանուն:

Կեա՛նք, կեա՛նք չըւայ որ դաշիս, ձգէ՛ զանոնք առանձին.
Կապէ՛ սիրտերն աւելի զգուանքներով քարերը,
Այնքան յոյսեր ու յոյզեր, այնքան երա՛զ ունին դեռ...:

Երկու որբեր անձանթ կը նոյնանան այս գիշեր ..:

ՍԻՐՏ ԻՄ ՍԻՐԱՀԱՐ

Սի՛րտ իմ սիրահար, պէտք է հեռանա՛լ,
Անձայն որպէս քար պէտք է հեռանալ:

Կեանքի ժայռին դէմ՝ փշրե՛լ մոլուցքով
Սիրոյ ամէն լար ու լո՛ւտ հեռանալ:

Ալ չունին հմայք աստղեր՝ յոյզի ծով,
Գիշերէն խաւար պէտք է հեռանալ:

* * *

Իսկ կռուի ժամին՝ օրուան համար նոր,
Որպէս խրոխտ ժայռ պէտք է ամրանալ:

Կռուի ն'րթ դառնալ, դառնալ եւ շեփո՛ր
Խոյանքի՛ համար պէտք է ամրանալ:

Սի՛րտ իմ սիրահար, ըլլալ եւ փարո՛ս
Ու դարերէ դա՛ր պէտք է ամրանալ...:

Ս Է Ր Ը

ՆԿԱՐԻ ՄԸ ԱՌԻՅՈՎ

Մտածումսն՝ ք

Ամպերու պէս կը քարձրանան մորից ծովէն.

Երկինքն ամբողջ կը սեւանայ յաւելումէն այս ամպերու

Որոնք այնտեղ՝ երկինքին մէջ,

Դանդաղօրէն ձևեր կ'առնեն,

Կ'ըլլան կարկուտ, կ'ըլլան անձրև,

Ու ամպերէն

Մերթ գոռալով,

Մերթ ալ լռին կ'իջնեն ցած:

Յուրերն իրենց կայծակնակերտ

Գիշերուան մէջ կը պլպլան.

(Անոնց դիմաց

(Ալ չունենար ո՛չ մէկ զաղտնիք ո՛չ մէկ աստուած):

Ու կը խորհիմ ես տակաւին

Միայնութեան մէջ գիշերուան...

Ռհ, սէր, միթէ՞

Հարկ է երգել քեզ տակաւին

Երէկըդ երբ փուշ է վարդի, այսօրդ՝ անուշ, վաղդ՝ յո՛ւշ արդէն.

Երբ քանիններ՝ խեղճ ու տկար,
Ծագող այգին դեմ կուրացան
Քեզմո՛վ միայն

Ու խելագար խոյանքիդ դեմ անջիղօրէն խորտակուեցան:

Ու միթէ՞, սէ՛ր,

Հարկ է տօնել քեզ տակաւին

Երբ քանինն՝

«Նստո՛ւն իրենց աշխարհ մոռցան.

Հա՛րկ է երգել

Երբ խաւարին մէջ գիշերուան

Արշալոյսնե՛ր կան երգելու....:

Հա՛րկ է, հա՛րկ է

Երբ պայքա՛ր կայ աշտարակուող

Քու ցաւերուդ դէզի՛ն փոխան....:



Չայներ ներսէն

Դանդաղօրէն կը բարձրանան.

Ու կը լսեմ զանոնք անշուշտ—սիրոյ անուշ խօսքի նման—

«Գետ է ան խոր որպէս անդունդ,

«Կ'ըսեն անոնք,

«Մերթ հեզասահ, միշտ խելագար ու յորձանուտ.

«Անյայտ շիրիմ» կամքով անգոր տկարներու.
«Բայց վազքն է իր
«Խոյանք մը գոռ
«Դէպի անալի համայնական ծովը անմահ:
«Ու երանի՛
«Որ իր սիրոյ ժայթքումն ամբողջ
«Համայնական ծիանքներուն հետ կը լուծուի»...:

* * *

Ի՞նչ որ երգել կարծես
Քիչ մը հուժկու ու վառման,
Սիրոյ խորունկ հընոցի
Եղան կայծերը մ'իայն:

Արձակեցի կայծերն իմ
Միջոցին մէջ ամէն տեղ.
Պիտի անոնց բոլնկի՞ն
Սիրտի մը մէջ սիրազեղ...

Ո՛հ, չեմ գիտեր, չեմ գիտեր...:

* * *

Խոհուն աչքի մը վրայ
Երէկ գիշեր կայծ տեսայ.
Կայծը անշուշտ գողունի
Քոցէ հոգի մ'ալ ունի...:



Իրա՛ւ է թէ սիրակա՛ն, եկել ես ինձ դու այսօր.
Գարնանային քոյրերով եկել ես ինձ դու այսօր:

Վարդ ես կապել մազերիդ, կարծես իմ սիրտն ես կապել.
Շուշան ու վարդ ու մեխակ քերել ես ինձ դու այսօր:

Դէմքդ շաղուել է հուրով, գարնանային շողերով,
Կարմիր մետաքս շորերով վառել ես ինձ դու այսօր:

Մտել ես դու մ'ի նոր կեանք, ձմեռն անցել է արդէն
Նոյն երազով սրտերի գերել ես ինձ դու այսօր:

Ամբողջ արեւ ես հիմ'ի, լոյս ես քաշխում քոլորին,
Գարնանամուտ ու օրհներգ դառել ես ինձ դու այսօր:

ԳԱՐՈՒՆ ՍԻՐՈՅՍ ԿԱԽԱՐԴԱՆՔՈՎ

Ամէն անգամ՝
Երբոր կ'անցնի
Լոյս մայթերէն,
Նայուածքն անուշ
Սա հասակիս
Բաղեղունելէն,
Քայլը՝ կշռոյթ,
Ինքը նուազ
Կ'ըլլան համակ:
Ա'լ կը մոռնամ
Ամէն կսկիծ
Եւ անյագուրդ
Ոսկեղէն իղձ.
Ա'լ կը մոռնամ
Թշուառ կեանքի
Ամէն մրմունջ.
Եւ անտրտունջ
Կ'ուզեմ նետուիլ
Իր թաւշային
Պարանոցին.
Հասակն առնել
Ժիածանին

Մէջ թնետրու՝
Որպէս արեւ
Որ գրկած է
Աշխարհն ամբողջ
Իբրեւ սիրոյ
Երազուած յոյս:

* * *

Երեկ գիշեր՝
Բազմաժխոր
Նոյն մայթերէն
Երբ ան կ'անցնէր,
Հովը վարսէն
Բոյր մը առաւ,
Համբոյր մ'առաւ
Եւ իր շուշան
Շող-մատներով
Սիրտերու մէջ
Գող մը դրաւ.
Մարդիկն ամէն
Այդ սուրբ րոյրով
Դարձան գինով:
Երեկ գիշեր՝
Բազմաժխորհուրդ

Լոյս ուղիւն
Երբոր կ'անցնէր,
Հովը սիրտէս՝
Հուր մը առաւ,
Մարտուն մ'առաւ
Ու տենչահար՝
Արօտներուն
Ան փարեցաւ:
Եւ ծաղիկներ
Նոր գոյներու
Հանդէս բացին
Արեգնային:
Եղաւ գարուն՝
Գարուն սիրոյս
Կախարդանքով...:

Գարուն, գարուն...
Թող լիանան
Ամէն երդիք
Եւ ամէն տուն:

ՄՊԱՍԷ ՀՈՆ

Սպասէ՛ զիս
Հո՛ն, սիրելիս,
Ուր կ'ապրէիր դարեր առաջ
Հողին վրայ հանճարածին՝ աշխարհասփիւռ ժողովուրդիդ:
Հո՛ն սպասէ՛,
Ուրիւ, պահ մը կարծեցիր դուն, անդարձօրէն ալ կը մ'եկնիս,
Թողած ասեր տունը ձերին՝ թէեւ պզտիկ,
Բայց կրնար ալ այնչա՛փ մ'եծնալ...
Թողած հոգիդ
Աւերակին մէջ տուներուն:

Սպասէ՛ հո՛ն
Որ երագիդ
Վեհ արծանը եղաւ անհաս դարեր ամբողջ,
Զոր պահեցիր գուրգուրանքով,
Թէեւ անկէ
Ոչի՛նչ գրկած ունէիր ալ ձեռքերուդ մէջ:

Հո՛ն սպասէ՛
Որուն համար
Տառապեցար
Այնքա՛ն երկար.

Գաղթականի ցուպը առած ծեռքերուդ մէջ
— Որոնք արեւն ալ կրնային գրկել անշուշտ —
Թափառեցա՛ր
Անտուն, անտէր,
Մե՛րկ ու սոված.
Որուն համար
Ամայութեան մէջ սենեակիդ
Հացիր այնքան
Ու վատնեցիր հոգի՛դ ամբողջ...:

* * *

Սպասէ՛ գիս
Հո՛ն սիրելիս,
Ուր սեւ թաթը մեր ոտխին
Անդարձօրէն խորտակուեցաւ բոունցքներուն դէմ հողագոյն
Ու կամփին դէմ պողպատակուռ այն մարդերուն
Որոնք գիտցան մեծ դարուն հետ շարժիլ անահ.
Եւան մարդի՛կ, ժողովուրդնե՛ր
Տապալեցին
Ի՛նչ որ կար հին
Ու շինեցին աշխարհ մը նոր
Գալիք պայծա՛ռ կեանքի համար...
Ու ծիլ տուաւ կեանք մը խինդի հողին վրայ արդարութեան:

Հո՛ն սպասե՛

Ուր արե՛ւ կայ այսօր պայծառ

Կեանքի որպէս յորդուն աղբիւր.

Ուր ծաղիկներ

Կուրծքերն իրենց

Ազատօրէն ալ կը բանան արեւին դէս.

Ուր ամէն կեանք խնդութի՛նն է, օրհնե՛րգ, գարո՛նն.

Ուր ոչ մէկ ցաւ կայ մնայուն...:

Հո՛ն սպասե՛

Ուր ալ չկայ ո՛չ մէկ ոտիս,

Ո՛չ մէկ գերող...

Ուր հարազատ

Յոյգերովն իր կեանքն է ազա՛տ...:

*
* * *

Սպասե՛ զիս

Հո՛ն, սիրելիս,

Որուն ահա ազգ մը ամբողջ

Ափերէն վերջ օտարութեան,

Թողած արցո՛նք, վիշտ ու կսկիծ,

Թողած ցուպն այս մահասարսուռ գաղթականի

Ու երէկն իր՝ փշեպսակ անպարագիծ,

Նոր յոյսերո՛վ կը սլանայ...:

Կարաւաններ, տե՛ս, լիճերէն ծո՛ւկ կը տանին

Հայութիւնը մ'եր վշտահար...:

Իմ վառ հոգիս ու սիրտս ամբողջ իր հետն առած

Եւ քննատր ազնիւ սիրով ժողովուրդին այս հիւրընկալ,

Նաւերն անոնց որքա՛ն ծանր են...:

Եւ օր մըն ալ երգո՛ւ, խինդով ու պարելով

Նաւերուն հետ ե՛ս ալ կու գամ:

Կու գամ, այո՛,

Կու գամ շաղել երգերըս նոր, յոյգերս վառ, սէրըս յորդուն

Համայնական աշխարհաշէն սարսուռներուն...:

Ու սիրելիս

Երեւանեան նոր արեւին ներքեւ մ'իայն

Եւ յոյգերով նոր տենդերուն երեւանեան

Սպասէ՛ իմ

Անվերադարձ վերադարձիս:

ՏԵՆԶ ՈՒ ՓԱՓԱՔ

Խինդի՛ր իրիկուն...
Աստղերն ուրախ են
Ու յաւէտ կ'երգեն...:

Տենդի՛ր իրիկուն...
Աստղերը կարծես
Համակ երգերն են

Ետլթութեան մ'անտես...:

* * *

Աստղերուն նման
Կ'ուզէի ըլլալ
Երգը յաղթութեան...:

Բոլոր՝ շրթներէն
Կախուէի ես վար
Ուրախ ու անքէն...

* * *

Սիրո՛յ անսասան
Ես քե՛րքն ըլլայի.
Վերջին յաղթութեան
Ես ե՛րգն ըլլայի...:

Ն ՈՒ Ա Գ Ը

Ա. - ԻՆ

Խաղաղած եմ ալ հիմա. դառնութիւններըս բոլոր՝
Իրենց մաշող ու վհատ խըլըրտումէն վերջ այնքան,
Քիչ մը դադար ալ կ'առնեն: Ու մեղեդին, ինչ շնորհ,
Կու գայ գրկել զիս համակ սիրոյ շունչի մը նըման:

Եւ ալիքներ՝ զերդ համբոյր քողջական շրթունքին,
Դողդողալով կը լեցուն հոգւոյս բոլոր ծաւքերուն.
Երակներուս մէջ կը զգամ տարբեր յորդում մը ուժգին,
Տարբեր պոռթկում մը սիրոյ շատրուանի մը հանգոյն:

Այնքան քարի՛ եմ հիմա... ես կը ցանկամ նետուիլ դուրս,
Գրկել մարդերը բոլոր երազին լոյս թեւերով,
Անոնց հոգւոյն անձրեւել աւիմն ամբողջ յոյգերուս...:

Կ'ուզեմ ժպտիլ սիրոյ պէս անյիշաչար բոլորին.
Վառ ժպիտներ ողջունել անոնց աղօտ դէմքերէն,
Արեւի պէս ժպիտներ՝ այգաբացի մը աստն:

Աշխարհն ամբողջ երգ մ'ըլլար, ես՝ մէկ ալիքը անոր...:

ԱԾԱԿԵՐՏՆԵՐՈՒՄ

Ա.

ԻՆՔՋԻՆԶՍ ԱՇԱ ՄԱՍ ԱՌ ՄԱՍ
ՋԵՐ ԲՈԼՈՐԻՆ ԿԸ ԲԱՇԽԵՄ:

Մաշաճ մարմնոյն ձեր վտիտ՝ ազգին ցաւերն են իջեր.
Յաւեր՝ որոնք երբեմն ալ ձեր աչքերէն խըլեցին
Տեսողութիւն մը յստակ: Ու վարանքով մը անջճր,
Քիչ մ'ալ թախծոտ աչքերով՝ հետեւեցաք դուք կեանքին:

Կեանքը ամբողջ՝ տառապանք եւ ամէն օր քայքայում...
Հեզնանք մը սուր եղաւ կեանքն զոր աստուածներ ձեր դէմքին
Նստաօրէն նետեցին փոխան անթաղ զոհերուն
Որոնք հիմա, ո՞վ գիտէ, ինչպէ՞ս արդեօք կը կռուին...:

Ամէն անգամ երբ այսպէս ձեր աչքերուն կը նայիմ
Ազգին ամբողջ տառապանքն ու տառապանքը մարդոց
Իմ աչքերուս դէմ՝ յանկարծ կ'առնեն հասակ ու մարմին:

Ես կը տեսնեմ՝ կռիւնե՛ր, մաքառումներ արինոտ,
Ի՛նչ անհամար աւերներ երազներու ու փառքի
Որոնց համար այս գիշեր ունիմ պոռթկում ու բողբոջ:



Բ.

ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԷՋ

Հիմա այնտեղ՝ երկրին մէջ, ամէն խրճիթ, ամէն տուն,
Պայքարներու արնաներկ, գրոհներու ալ գնով,
Կառուցումի տննդն ունի մէջն իր անյաղթ ջիղերուն:

Ամէն խրճիթ՝ արեւոյդ, ունի երա՛գ մը շքեղ՝
Ապագային զայն իրա՛ւ, պերճահառակ տեսնելու,
Երազ մը լուռ ուր գիրենք քնէ պիտի յաղթագեղ...:

Ամէն մանուկ, ամէն ծեր ժպիտ մըն է յաղթական՝
Բացուած դէմքին հայրենի հողին վրայ կենսութեան
Ուր կը դողայ յուսավառ սարսուռներով ամէն բան:

Հիմա այնտեղ՝ երկրին մէջ, ինդունի՛ն կայ եւ օրհներգ,
Հայ մամիկին ձեռքը սուրբ ալ չի՛ դողար սարսափէն,
Ալ չի՛ յիշեր ան կարծես իր վաղեմի ցա՛ւն ու վէրք:



Գ.

ԱՅՍՈՐ՝ ՄԵԾ ԳԱԼԻԹԻ ՆԱԽՕՐԵԻՆ

Ասկէ յետոյ մայթերէն, ծամբաներէն ու արտէն
Քաւէք ուրախ հեգասահ, նոր յոյսերով ակաղծուն,
Քանզի մատղաշ սիրտը ձեր ու հոգիները արդէն
Առագաստներ կը քանան քացուող պայծառ օրերուն...:

Թող փշապատ ոչ մէկ թուփ դառնայ ձեզի հիւրընկալ,
Խըլէ արիւնը ձեր ալ երակներուն ու սիրտին.
(Բայց երբ մարդիկ ուզեն ձեր իրաւունքին տիրանալ
(Ատելավառ թող հոսի պայքարին մէջ արնածին):

Երակներուն ձեր նիհար թող սարսըռայ պոռթկումով
Ողբերգութիւնը մարդոց, դողը քուր՝ խեղճերուն:
Դառնաք տէրեր անտէրին՝ հացի համար պայքարող,
Եւ աչքերուն սրբէք դուք արիւնող լացը անհուն:

Ու սարսուտներն ամէն օր ձեր սիրտին մէջ թող մեծնան.
Մեծնաք եւ դո՛ւք անոնց հետ, մեծնաք օրով, աներեր:
Թող ձեր դրօշն ըլլայ յար կեանքի իմաստն աշխօրումն՝
Հայրենիքին արժանի՝ դառնալ անխո՛նջ մարտիկներ:

Ո Ւ Խ Ս

ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԻ ՄԸ ԱՆՅԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ո՛վ դուն ասպետը՝ մեռնող՝ մեր հայութեան երագին.
Այս հիրընկալ, այլ օտար հողակոյտիդ վրայ մենք՝
Բազուկներով ջլապինդ ու մեր կամքով պայքարին,
Ուխտի խօսքերը անշէջ որպէս ծաղի՛կ կը սփռենք:

Ընդունէ՛ այս որպէս հո՛ւր ժողովուրդիդ վեհ կամքին՝
Խաչելութեանց ընդմէջէն գոյատեւման ի խնդիր.
Հուր մը անշէջ՝ դարերու մեր նախնիներն ունէին,
Եւ զոր դո՛ւն ալ ունեցար ու բուռնբաց մեզ տուիր...:

Կ'ուխտե՛նք ըլլալ այն զոր դուն ամէն վայրկեան ուզեցիր
Մեր հոգիին մէջ տեսնել — Ազգանուէր մ'իրական —
Կ'ուխտե՛նք պահել միշտ անմար ջահը յոյսին անքասիր,
Ջահը սիրոյ՝ կանգնուող հայրենիքին յաղթական:

Կ'ուխտենք, կ'ուխտենք անվրհատ շարունակել այն ճամբան
Ուր քաղեցինք հայրական սիրտիդ սիրոյ արեւով.
Շարունակե՛լ անվրհատ մ'ինչեւ կատարն քարձրութեան
Մինչեւ Մասիս ու Սեւան, մ'ինչեւ դարերն անխրոով...

Յ Ա Ս Ո Ւ Մ

Ահա՛, ցատո՛ւմ, վերջապէս քեզ կ'ունենան լիովին.
Երակներու մէ՛ջն ես արդ որպէս մասնիկն արիւնիս.
Երանութի՛նն ըլլայ թող դարձըդ այսքան ջերմագին
Եւ ամէն օր աւելի լեցուի հիւանդ իմ հոգիս:

Երբ հեռացար պահ մը դուն եղայ անգոր ու մի՛նակ.
Մոռցայ ես զիս, մոռցայ քեզ, մոռցայ աշխարհը անգամ.
Մեղի ու նուաւտ հոգիով անցայ քամբէն գլխահակ
Ու ապրեցայ այլամերժ գիշերներու մէ՛ջ միայն:

Այժմ յորդէ՛, ո՛վ ցատում, հըրաքուխի ժայթքումով.
—Այնքան հզօր եմ՝ այլեւս սարուող իմ մէջ կրելու —.
Տն՛ս, պարտէզն է աւերուած պիղծ ու դաժան ձեռքերով
Ու երազներս կը խամբին նըման պոկուած ծիւերու:

Յորդէ՛, ցատո՛ւմ, քեզ հիմա շողերու տեղ կ'ընդունիմ.
Միմիայն դո՛ւն կրնաս տալ ծաղկումը հին՝ պարտէզիս.
Ինչո՛ւ, ինչո՛ւ կարենան ձեռքեր քանտել իղծերն իմ
Իրենց անհաշտ դաւերով ու թնաթափ ընեն զիս:

Ցատո՛ւմ

Ձեռքերուն դէմ բռնակալ քոցավառէ՛ իմ հոգիս:

ՆԱՀԱՆՋՈՂ ԸՆԿԵՐՈՋ

Ինչո՞ւ իյնալ դեռ չխնկած աշխարհն ամբողջ հոգւոյդ մէջ.
Ինչո՞ւ իյնալ՝ երբ կը ծաղկին ծափ ու ծիծաղ ամէն դի,
Երբ կը լեցուն երանութեան ծիածանով մը անշէջ
Սիրտերն ամէն ճոխութեանց մէջ ծովածաւալ ու յուլթի:

Ինչո՞ւ խոկալ երազներու դողի մասին անմատոյց
Երբ կրնաս ալ երազիդ ճգտիլ մարմնոյն իրական.
Ինչո՞ւ չըլլալ լավա դարձող նոր յոյգերու ուղեցոյց
Ու չյորդիլ համայնական անսանձ քոցի մը նըման:

Ինչո՞ւ չըլլալ պայքարի երթ այս դարին պէս մարտազոռ
Ու չլեցուիլ սիրտերու մէջ որպէս արին ու խոյանք.
Ինչո՞ւ չտալ արեւ ու շուք հոգիներուն վիրաւոր
Ու նոր դարին՝ նոր հոգիով ինչո՞ւ չըլլալ արձագանգ.

Ինչո՞ւ ընկե՛ր, ընկե՛ր անգին, ինչո՞ւ մեռնիլ՝ չմեռած...:

ԵՐԳԸ ՄԵՐ ՆՈՐ

Արիւններէն ծնած արդէն,
Պայքարներու մ'իշտ առնլծեր,
Ալ կը քալենք ճամբաներէն
Հալարտ բռնած զըլուխը մ'եր:

Փոթորիկներ մ'եզ կը սպասեն
Այս անվեհեր ճամբուն վրայ
Ուր յուսախաբ՝ ցուրտ երազէն,
Իղճը մարդուն կը դողդըղայ:

Սակայն խիզախ՝ հացին համար
Չարիքի զոհ աղքատներուն,
Մինչեւ իշխէ դրօշն արդար
Պիտի անլաց թափենք արին:

Անմահութեան ճամբաներէն
Այսօր, մարդիկ, ահա տեսր,
Կը տողանցենք հալարտօրէն՝
Քայլերը մ'եր վեա ու անլծեր:

Ե Ր Ե Ի Ա Ն Ի Ն

Անմահներու փառքին հասած, անհունացող քաղաք ես դուն.
Դառադուլթեան արթուն պահակ՝ միջագգային քանակ ես դուն.
Արինավառ քիւր դարերու մեր նահատակ սերունդներուն,
Շօշափելի որպէս մարմին, յաղթանակած հաւատքն ես դուն:

Ինչպէ՞ս երգել փառքը հզօր գրոհներուդ նոր ու մեկին,
Ի՞նչ սիրտ ու միտք ճառագայթել արժան փառքիդ անդ թափին.
Ըլլան քառեր աստղե՛րը թող գովերգում՝իդ յստեժական,
Հին արեւին նոր փայլ տուող անմարելի կըրակ ես դուն:

* *

Որպէս ապրող մ'իրաւագործ, ուժովդ այնքան լեցուն եմ ես,
Կարծես մարդոց երակներուն շրջան ընող արիւնն եմ ես.
Ելլեմ երկինք, կանգնիմ հպարտ խաւարին դեմ որպէս արեւ,
Ողջ հայութեան ու աշխարհին կեանք պարգեւող նոր այգ ես դուն:

Երազներուս սլացք տուող լուսամասմանչ հունը եղար.
Բազմատեսակ իմ սէրերուս կենսապարգեւ բունը եղար.
Գարունն անգամ տեսէդ միայն առաւ հմայքն իր սրտայոյզ,
Գեղեցիկին ու քարին որպէս կշիռ՝ որակ ես դուն:

● Վ Ե Ր Զ ●



Հոս՝ երախագիտութիւնս կը յայտնեմ Կիւ-
պենկեան Շրջ. Հարագաս Միութեան Վարչութեան,
անոր ցոյց տուած բարոյական աջակցութեան համար:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028934

5 n.]

A $\frac{II}{28934}$

ԳԻՆ՝ 200 Ս. Գ.
ԱՐՅԱՍԱՀՄԱՆ 5 ՇԵԼԻՆ

Հասցե,—

Imprimerie ANI
Rue Salibé, Alep (Syrie)